

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Դրակոնբոուրի» Հայկական

Ֆեդերացիայի նախագահ

_____Մ. Սարգսյան

_____ 2018թ.

**Հայաստանի «Դրակոն» մակույկների թիավարողների
ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության
մրցումների անցկացման
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Նպատակները և առաջադրանքները

Երիտասարդ և պատանի մարզիկների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության Հայաստանի ձմեռային մրցաշարը անցկացվում է հետևյալ նպատկով՝

- Հայաստանում «Դրակոն» մակույկների թիավարության զարգացում և ժողովրդականացում, որպես սպորտի տեսակ.

- ֆիզիկական մշակույթում և սպորտում երիտասարդության և բնակչության լայն շերտերի մասսայական ներգրավում.

- ֆիզիկական մշակույթի կազմակերպությունների՝ ուսումնական, սպորտային աշխատանքների բարելավում և ակտիվացում, մարզիկների՝ «Դրակոն» մակույկների թիավարության, սպորտային վարպետության մակարդակի բարձրացում.

- մարզիկների՝ «Դրակոն» մակույկների թիավարողների ընդհանուր ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության վիճակի վերահսկում՝ ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության ստուգողական նորմատիվների կատարման ժամանակ.

- լավագույն մարզիկ-թեկնածուների բացահայտում Հայաստանի հավաքական թիմի համար՝ միջազգային մրցումներին մասնակցելու նպատակով:

2. Մրցումների անցկացման ժամկետները և վայրը

Մրցումներն անցկացվում են 2018 թվականի փետրվարի 11-ին, հասցեն՝ ք. Արտաշատ, Մարզադահլիճ

3. Մրցումների անցկացման կազմակերպումը և ղեկավարումը

Մրցումների կազմակերպման և անցկացման ընդհանուր ղեկավարումն իրականացվում է «Դրակոն Բոուլի» Հայկական Ֆեդերացիայի կողմից (այսուհետ՝ ԴԲՀՖ): Մրցումների անմիջական անցկացման պատասխանատվությունը կրում է ԴԲՀՖ-ի կողմից հաստատված Մրցավարական անձնակազմը:

Մրցումների գլխավոր մրցավար՝ Ժաննա Սահակյան, ԴԲՀՖ ազգային դասակարգման մրցավար:

4. Մրցումների մասնակիցները

Մրցումներին մասնակցել թույլատրվում է Հայաստանի քաղաքացի մարզիկներին: Մրցումների մասնակիցները պետք է լինեն ԴԲՀՖ-ի կողմից թույլատրված անձիք:

Թիմի կազմը՝ մարզիչը և ներկայացուցիչը, մարզիկների թիվը մեկ թիմում անսահմանափակ է:

5. Միջոցառման բնույթը

Մրցումներն անհատական են և անցկացվում են համաձայն ԴԲՀՖ-ի կողմից հաստատված Կանոնների, սույն Կանոնակարգի պահանջների կատարմամբ:

6. Մրցումների ծրագիրը

Երիտասարդների և պատանիների միջև ընդհանուր պատրաստվածության Հայաստանի ձմեռային մրցումները անցկացվում է հետևյալ տարիքային դասակարգումների համար՝

- 12 - 14 տարեկան, 15 - 16 տարեկան, 17 - 18 տարեկան, 19 - 24 տարեկան

ծրագրի հետևյալ տեսակներում՝

տղաներ՝

Ծրագրի տեսակ Մասնակիցներ	Ծանրաձողի հրում պարկած դիրքից Жим штанги лежа	Ծանրաձողի բարձրացում պարկած դիրքից Тяга штанги лежа	Վազք
12 - 14 տարեկան	25 կգ	25 կգ	400 մետր
15 – 16 տարեկան	35 կգ	35 կգ	800 մետր
17 - 18 տարեկան	40 կգ	40 կգ	800 մետր
19 - 24 տարեկան	45 կգ	45 կգ	800 մետր

Աղջիկներ՝

Ծրագրի տեսակ Մասնակիցներ	Ծանրաձողի հրում պարկած դիրքից Жим штанги лежа	Ծանրաձողի բարձրացում պարկած դիրքից Тяга штанги лежа	Վազք
12 - 14 տարեկան	20 կգ	20 կգ	400 մետր
15 – 16 տարեկան	25 կգ	25 կգ	800 մետր
17 - 18 տարեկան	25 կգ	25 կգ	800 մետր
19 - 24 տարեկան	30 կգ	30 կգ	800 մետր

Ծանրաձողի հրում պարկած դիրքից և բարձրացում պարկած դիրքից հաղթողների ընտրությունն ըստ նշված ժամանակում կատարված վարժության առավելագույն քանակի:

Վազք. հաղթողների ընտրությունն ըստ վազքի ընթացքում մարզիկների ցուցաբերած լավագույն ժամանակային արդյունքի:

Հաղթողն ընտրվում է տղաների և աղջիկների շարքից առանձին, ծրագրի յուրաքանչյուր տեսակի համար, համաձայն նշված ժամանակում

կատարված վարժության առավելագույն քանակի և համաձայն վազքում գրաված տեղի:

* Ընդհանուր Ֆիզիկական պատրաստվածության Հայաստանի մրցաշարի մասնակցությունը հանդիսանում է «Դրակոն» մակույկների թիավարության աշխարհի և Եվրոպայի մրցումներին մասնակցելու համար Հայաստանի հավաքական թիմի անձնակազմի հավաքագրման ժամանակ ընտրության պայմաններից մեկը:

7. Մրցումների ծրագիրը

Մրացումներն անցկացվում են հետևյալ ծրագրով՝

Ամսաթիվ	Ժամ	Բովանդակությունը
11 փետրվարի 2018 թվական (կիրակի)	մինչև 11:00	Մրցումների մասնակիցների ժամանում: Մասնակիցների գրանցում:
	11:10	Թիմերի ներկայացուցիչների նիստ, վիճակահանություն:
	11:30	Մրցավարական անձնակազմի խորհրդակցություն:
	11:40	Թիմերի ներկայացուցիչների հետ հանդիպում:
	11:50	Մասնակիցների շքերթ, մրցումների հանդիսավոր բացում:
	12.00 – 15.00	Պարկաձ դիրքից ծանրաձողի հրման վարժության մրցույթ
		Պարկաձ դիրքից ծանրաձողի բարձրացման վարժության մրցույթ
		Վազքի մրցում
	15:15	Մրցավարական անձնակազմի խորհրդակցություն, արդյունքների ամփոփում
	15:30	Թիմերի ներկայացուցիչների հետ հանդիպում:
	15:45	Հաղթողների պարգևատրում, մրցումների փակում:
	16:15	Մրցումների մասնակիցների մեկնում:

8. Արդյունքների ամփոփում

Երիտասարդ և պատանի մարզիկների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության Հայաստանի ձմեռային մրցման հաղթողներն ընտրվում են ծրագրի բոլոր տեսակներում զբաղեցրած տեղերի գումարով:

Նշված ժամանակում վարժության կատարման հավասար քանակի դեպքում նախապատվությունը տրվում է ավելի փոքր ծննդյան թիվ ունեցող մարզիկին:

Մրցումներն անհատական են:

9. Պարգևատրում

Այն մարզիկները, ովքեր Հայաստանի ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության ձմեռային մրցմանը զբաղեցրել են 1, 2, 3 տեղերը երեք տեսակների գումարով, պարգևատրվում են շքանշանով և թանկարժեք նվերներով:

10. Միջոցառման ֆինանսավորման և մասնակիցների նյութական ապահովման պայմանները

Մասնակիցների, ներկայացուցիչների, մարզիչների գործուղման հետ կապված բոլոր ծախսերը (երկկողմանի ճանապարհաձախարհ, կացության, սննդի վճարը, օրավարձը, աշխատավարձի պահպանումը) իրականացվում է գործուղողների և իրենց հաշվին:

Սպորտային շինությունների վարձակալության հետ կապված ծախսերը կատարվում են ԴԲՀՖ-ի միջոցների հաշվին:

11. Մարզային շինությունների նախապատրաստումը

Սպորտային շինության սեփականատերը ոչ քիչ, քան 4 ժամ մինչև մրցումների սկիզբը, պարտավոր է աշխատանքային հանձնաժողովին հանձնել ակտ մրցումների անցկացման համար դրա պատրաստ լինելու մասին: Սույն կետով նախատեսված պահանջների չկատարումը, ինչը մրցումների անցկացման ընթացքում հանդիսացել է արտակարգ իրավիճակների առաջացման պատճառ, ենթարկվում է պատասխանատվության:

Մրցումների ժամանակ մարզիկների, մարզիչների, ըստ սպորտային տեսակների մրցավարների անվտանգության ողջ

պատասխանատվությունը կրում են գլխավոր մրցավարները ըստ սպորտի համապատասխան տեսակների:

12. Մրցումների բժշկական ապահովումը

Մրցումների բժշկական ապահովության համար ներգրավվում են որակավորված բժշկական աշխատակիցներ: Սպորտային բժշկության բժշկի ներկայացությունը պարտադիր է բոլոր մակարդակների մրցումներին: Մրցումների բժիշկը պատկանում է մրցավարների անձնակազմին՝ գլխավոր մրցավարի փոխարինողի իրավունքներով: Նրա բոլոր որոշումները իրավասությունների սահմաններում պարտադիր են մրցումների մասնակիցների, մրցավարների, կազմակերպիչների համար: Բժիշկը կազմակերպիչներին կամ մրցավարների անձնակազմին է հանձնում մրցումների բժշկական ապահովության ծրագիրը և հաշվետվություն դրանց ավարտից հետո:

13. Դիմումներ

Անվանական դիմումի մեջ անհրաժեշտ է նշել յուրաքանչյուր մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, որակավորումը, մրցումների տեսակը, որոնցում նա թույլատրվել է, բժշկի եզրակացությունը թույլատվության վերաբերյալ: Ամսաթիվը, բժշկի ստորագրությունը և այն բժշկական-ֆիզ. դիսպանսերի կամ բժշկական պրոֆիլակտիկ հաստատության կնիքը, որտեղ մարզիկը գտնվում է հսկողության տակ, դրվում են յուրաքանչյուր մասնակցի ազգանվան դիմաց: Այլ հաստատությունների կնիքները կամ բժշկի անձնական կնիքը վավերական չեն: Մրցումներին մասնակցելու Անվանական դիմումները, անձնագրերը (անձի մասին վկայականը), մրցումների կանոններով նախատեսված այլ փաստաթղթերը հանձնվում են մրցումների կազմակերպիչներին՝ ժամանման օրը:

Մրցումներին մասնակցելու նախնական հարցումներն ուղարկվում են ոչ ուշ, քան մրցումները սկսվելուց 10 օր առաջ՝ armdragonboat@gmail.com էլեկտրոնային հասցեին, ճշգրտումների համար հեռ.՝ 055-59-63-16.

Սույն կանոնակարգը հանդիսանում է մրցումների պաշտոնական հրավեր:

